# Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵԾԱՄՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԸ ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է ՄՐՑՈՒՅԹ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲԱԺՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ (ԾԱԾԿԱԳԻՐ 3.1-62) ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի առաջատար մասնագետի (ծածկագիր 3.1-62)՝ հիմք Մեծամոր համայնքի ղեկավարի 2025 թվականի մայիսի 13-ի N1121 որոշման հավելվածը (կից պաշտոնի անձնագիրը) :

Դիմող քաղաքացիները Մեծամորի համայնքապետարան (ք.Մեծամոր վարչական կենտրոն 4 շ.) կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան (ք.Արմավիր, Աբովյան 71) պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

1) գրավոր դիմում (Ձև 1).

2)քաղաքացու դեպքում՝ անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն, իսկ փախստականի դեպքում՝ Հայաստանի Հանրապետության փախստականի կարգավիճակը հավաստող փաստաթղթի պատճեն.

3) դիպլոմի լուսապատճեն.

4)առնվազն միջնակարգ կրթության պահանջի դեպքում՝ կրթությունը հավաստող փաստաթուղթ (ատեստատ).

5) աշխատանքային գործունեությունը հավաստող փաստաթղթի պատճեն.

6) արական սեռի անձինք ներկայացնում են զինվորական գրքույկի (բոլոր գրառում ունեցող էջերի լուսապատճեն) կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճեն.

7) մեկ լուսանկար՝ 3x4 սմ չափսի.

8)հայտարարություն այն մասին, որ ինքը չի տառապում Կառավարության որոշմամբ հաստատված ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկով, որը հանրային ծառայության պաշտոնում նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել ծառայողական պարտականությունների կատարմանն ու լիազորությունների իրականացմանը.

9)հայտարարություն այն մասին, որ անձը դատական կարգով չի ճանաչվել անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

10)հայտարարություն այն մասին դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չեն.

11)հայտարարություն համայնքային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով պահանջվող օտար լեզվին (լեզուներին) տիրապետելու մասին.

Քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ՝ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթուղթը:Մրցույթներին մասնակցելու համար քաղաքացիների ներկայացրած փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Աշխատավարձի դրույքաչափը՝ համաձայն համայնքի ավագանու 2025 թվականի նոյեմբերի 14-ի 179-Ա որոշմամբ ՝ 202.000 ( երկու հարյու երկու հազար) ՀՀ դրամ:

Թափուր պաշտոնի համար նշանակված մրցույթը կկայանա 2026թ. մարտի 17-ին ժամը 11:30-ին՝ Մեծամորի համայնքապետարանի վարչական շենքում՝ ք. Մեծամոր վարչական կենտրոն 4 շ. հասցեում:

Մրցույթին մասնակցելու դիմումների ընդունման վերջնաժամկետն է 2026թ. մարտի 9-ը, մինչև ժամը 18:00-ն:

Փաստաթղթերը ընդունվում են յուրաքանչյուր աշխատանքային օր ժամը 09:00-13:00 և 14:00-ից 18:00-ն Մեծամորի համայնքապետարանի աշխատակազմ /ք.Մեծամոր վարչական կենտրոն 4 շ. հեռ./060900303/ կամ Արմավիրի մարզպետարան /ք.Արմավիր Աբովյան 71/: